

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՆՆԵՐԸ.

ԱԼԷՔՍԱԿՐԱՊՕԼԻՑ ՂԱՐՍ.

Ես խոստացել եմ հետ զհետէ իմ նկատողութիւնները գրել և խոստումս կատարուեմ: Ես հնախօս չեմ, հետևարար հնազգիտութեան վերաբերեալ խնդիրներով չեմ զբաղուիլ: Ինչ որ նկատողութեան արժանի համարեմ, նոցա մասին մի քանի խօսք կը զրուցեմ ու կ'անցնեմ: Այս համառօտ նախաբանից յետոյ անցնեմ նպատակիս:

Ա.

Ալէքսանդրացի էր Գերեզմանագործը, և շտեբն -- Բոչը:

Յայտնի է որ Ալէքսանդրապօլը արևելեան Շիրակումն է, Արփաչայի ձախ ափի վերայ: Իսկ Շիրակը մի լեռնադաշտակ է արգաւանդ սև հողով, ծովի մակերևութից մտա 1500 ոտնաչափ բարձր: Շիրակը այդ բարձրութեան վերայ գտնուելով հանդերձ, ամառը բաւական շոգ է լինում և սորա պատճառն, ըստ կս, ծառերի և բուսականութեան պակասութիւնն է, այս իսկ պատճառով էլ անձրևների սակաւութիւնը:

Յունիս և Յուլիս ամիսներում Շիրակը գրեթէ անձրև չը տեսաւ և ամեն որ յուսահատ էր, երաշտութեան երեսից հնձոց պակասութիւն դուշակելով: այնպէս որ, Յուլիս ամսի մէջ, ցորենը և ալիւրը մէկէն ի մէկ բարձրացան, սակայն Աստուած Շիրակացու խեղճութեան զթաւով, լաւ ժամանակին անձրև տուեց, և անձրև տեղաց արտերի հասնելու այն կէտին որ ստեղծ է կոչվում կամ հասկալիս: Այժմ, որ սկըսել են կալսել, տեսնում են որ բաւական արգիւնաւոր հունձր ևն ունեցել: Թեպէտ ծղօնը չըբարձրացաւ, սակայն հասկերը գոհացուցիչ թրուով հատիկներ են պարունակում: Եւ այս տարի Շիրակացին միայն անասնոց ուտեստի պակասութիւն կզգայ:

Ինչպէս ասացի, ամբողջ Շիրակի դաշտը այս ամառ բաւական ջերմ եղանակ ունէր, և Ալէքսանդրապօլցիք բաւական շոգ և քամու աւազախառն Բոչը վայելեցին, որով բաւական հիւանդացողներ եղան ու բաւականէն աւելի ննջեցեալներ հողին պահ տուին:

Ալէքսանդրապօլում, ի միջի այլոց, ննջեցեալների վերաբերութեամբ մի երկոց լաւ սովորութիւն կայ, առաջին այն է, որ ուրիշ տեղերի պէս ննջեցելոց դագաղի վերայ թաղման կարգը եկեղեցում կատարելիս, ազգականների կողմից լաց ու շփոթ չի լինում: Երկրորդ սովորական դարձած մեծածախ հացկերոյթ չի կատարվում ոչ գերեզմանոցում, և ոչ տանը: Ես չըզգիտեմ թէ երբ և ի՞նչպէս է վերացել ազգականների սուգն ու լացը եկեղեցում կարգը կատարելիս, բայց մեռելահացը վերացել է մտիկ տարիներումս Գեր. Սուքիաս Ապիսկոպոսի Փոխանոր-

դուժեան օրով, այն բարոյական պարտաւորութեամբ, որ ննջեցեղատէրերը յօժարակամ նուէրներ հասցնեն տեղւոյն աղքատանոցին ի տեղի հացկերութի ծախուց: Այս բարոյական պարտքը ոմանք զանց են անուամ կատարելու, բայց ոմանք էլ լիառատ կատարումն, ոչ միայն աղքատանոցին, այլև միւս հասարակական հաստատութեանց բաժին հանելով: Բայց ես զառնամ զէպի մի ամենակարեւոր խնդիր:—

Ալէքսանդրապօլում տարուայ եղանակները իւրեանց յատկութեան կատակեալ արտայայտութեամբ իշխումն, օրինակ՝ գարունը և աշունը չարիազանց անձրեային են լինում, փոզոցները այդ ժամանակները կատարեալ ցեխի գետակներ ու լճակներ են ներկայացնում, ամառը՝ սարսափելի աւազախոսն փոշին է իշխում, իսկ ձմեռը՝ ցուրտն ու թիփին: Գերեզմանատուներ քաղաքի կենդրոնից կամ եկեղեցիներից, որոնք համարեա մի գծի վերայ են, երկու վերստաշափ հետի է, զարի վերայ: Յուզարկաւորները բնութեան զէմ մաքառում են ամեն անգամ զէպի մշտնջենական բնկարանը իւրեանց սիրելին տեղափոխելիս, կամ սարսափելի ցիւային լճերի միջից ոստոստելով անցնելով և կամ փոշեխեղդ լինելով, իսկ այդ սովորական ճանապարհի վերայ հոգացող չկայ: Այդ սովորական ճանապարհի երթեկէր որչափ կը հեշտանար, եթէ խճուղի զարձնէին, երկու կողմից քաղաքի մէջ լայն մայրուք և առուակներ շինելով: Այս մասին տեղւոյս Հոգ. կառավարութիւնը զրազրութիւն է սկսել գեւ այն ժամանակին, երբ 1878 թուին Ալէքսանդրապօլում Գաւառապետը Ապրիլի 18ին № 3777 պաշտօնական հաղորդագրութեամբ յայտնումէ կառավարութեանը գերեզմանատան փոխադրութեան համար կազմած արձանագրութիւնը, «որից երևումէ որ, ի միջի այլոց որոշուած է յանձնել ճարտարապետական իշխանութեան քաղաքիս, կարգադրել, նորոգ գերեզմանատան ճանապարհը շինել արբունի զանձարանի և քաղաքի հաշուով ընդ նմին և տեղը շրջապատել նշանաւոր գծերով և յետոյ պարսպով» (Չակերտներով որոշուածը վեր առած ու փոխադրած է Հոգ. կառավարութեան Պ. Բարաշեանների յայտարարութեան մասին կայացած զեկուցումից):

Գերեզմանատուներ փոխադրուել է որոշուած տեղը, բայց խոստումը ճանապարհի շինութեան և գերեզմանոցը պարսպելու համար, ոչ միայն չէ իրագործուել, այլ մոռացուել է անգամ:

Ինչպէս յայտնի է պաշտօնական զրազրութիւններից, նոր գերեզմանատուներ սկիզբն է առել 1878 թուին, չընայելով այդ կարճ ժամանակին, բաւական ընդարձակ տեղ արդէն շիրիմներով ծածկուած է, որ ցաւալի բան է: Եթէ Ալէքսանդրապօլի կլիման ընդհանրապէս առողջարար է, սարակոյս չըկայ: Այդ ժողովուրդը, պատմութիւնից յայտնի է որ, շատակերէն բազմաձունդ է, որչափ նախանձելի կը լինէր ժողովրդեան կեցութիւնը՝ եթէ հոգ տարուէր առողջապահութեան վերայ: Ըստ Ք. Թոմասի գիւղացիք, այլև քաղաքացւոց մեծ մասը գեւ գետնափոր

խոնաւ բնակարաններում են պատասպարիում. ուր օդը և արևի ջերմութիւնը մանուկէ մի փոքրիկ երդիկից, Այս իսկ պատճառով զանազան հիւանդութիւնները քաղաքիցս անպակաս են, որոնք նպաստում են զերեզմանատան այդպէս շուտ լցուելուն: Մենք հայերս դեռ չենք սովորել մեր գործերի մէջ կարգ կանոն պահել. այսպէս էլ զերեզմանատան մէջ ննջեցեալները խառն ի խուռն թաղուած են, այն ինչ կարելի էր օրինաւոր կարգին ուղիներ թողնել և ննջեցեալներին առանձին առանձին յատկացեալ մասերում թաղելով՝ ընդհանուր կարգ պահպանել, որով երթեկութիւնը զերեզմանատան մէջ կը հեշտանար, Արևելի էր մինչև անգամ, եթէ ոչ իւրաքանքանչիւր շիրիմները բնական ծաղիկներով շրջապատել, գոնէ շրջան կազմող ուղիների երկու կողմը ծառեր տնկել, որով մեռելոց այդ տխուր աշխարհը հաճոյական տեսք կստանար և մարդիկ՝ որ սիրում են առհասարակ այդ խաղաղ բնակարանի մէջ յաճախել և բաւականութիւն են զգում՝ շիրիմների արձանագրերը կարգալով, այդ ծառերի հովանեաց տակ նստել և կարգացած արձանագրութեանց իմաստների սրամազրութեան տակ առ վայր մի մոռանալ աշխարհը իւր բոլոր մելութիւններով, ուր առ վայր մի առաքինութիւնը կանգնումէ իւր յաղթանակը և մարդուն ստիպումէ լինել բարի, բարեգործ, արդար, ուղղամիտ, պարտաճանաչ և մարդասէր ընկեր, խնամառատ ծնող և պիտանի քաղաքացի, Գոնէ իմ վերայ այդ տպաւորութիւնը թողնում են շիրիմների արձանագրերը, որոնք իւրեանց մէջ են բովանդակում մարդկային մտքի առաքինութեան վերաբերեալ բոլոր նրբամտութիւնները, Բայց ես չեղուեցի:

Ինչպէս տեղւոյս Հոգ. Առաւմարութիւնը զերեզմանատան ճանապարհը խճուղի դարձնելու համար գրադրութիւն է սկսել ում հետ հարկն է, այնպէս էլ զերեզմանատունը պարսպապատ և ծառազարդ անելու համար սկզբնառիթ են եղել ինչպէս յիշեցի Մեծ. եղբարք—Գէորգ և Բժշկապետ Աւետիք Բարայեանք, որոնք գրաւոր (№ 25 մարտի 5ին 1880 ամի) յայտարարութեամբ այդ նպատակին իւրեանց նուէրը ներկայացնելով Հոգ. կառավարութեանը՝ խնդրում են կարգադրել, որ Աղքատանոցի հոգաբարձութիւնը իւրաքանչիւր ունեւոր ննջեցեալատեղերից նուէրներ ստանայ նոյն նպատակի համար. և երեք ամիսը մի անգամ հաշիւը ներկայացնի Հոգ. Առաւմարութեան ի տնօրէնութիւն, Հոգ. Առաւմարութիւնը յիշեալ Բարայեանների ներկայացրած գրամը (№ 419 մարտի 19ին 1880 ամի) հրամանագրով ուղարկելով աղքատանոցի Հոգաբարձութեան՝ հարկաւոր կարգադրութիւնն անումէ՝ տալով ժապաւինեալ տուժար մուտքն ու ծախքը գրելու, և պատուիրելով, որ աշխատեն հոգաբարձուք այդ գեղեցիկ նպատակի կատարման համար: Բայց ինչպէս այդ տեսակ գեղեցիկ նպատակները միանգամ միտք բերելով մինչև կատարելը մոռացվում են, նոյնպէս էլ այս՝ մոռացութեան է տրվում. և եթէ դէպքը չը պատահէր, ես գուցէ բնաւ այդ

մասին տեղեկութիւն չ'ունենայի։ Յուսարով որ ժամանակը կ'ուզէ
այն ամենը, ինչ որ մենք անհոգութեամբ պակաս ենք թողնում, մեղ
լաւ մեղադրելով մեր յուլութեան, ծուլութեան, թուլութեան, ան-
տարբերութեան և որ զխաւորն է՝ շուտով մոռացութեան համար։ Շա-
քունակեմ։

Յունիսից սկսած մինչև Յուլիսի վերջերքը քաղաքիս սովորական
հոգմբ իրիկնապահներին փշուռէր սաստկութեամբ՝ աւազախառն փոշե-
ղէն ամպեր յարուցանելով և ի պատիժ՝ քաղաքացւոց անտարբերու-
թեան նոցա աչքերը լցնելով, որ տեսնումեն ծառերի բացակայութիւ-
նից յառաջացած այդ պատուհասը և չեն հոգս անում։ Աւազախառն
փոշու հետ ոչ սակաւ նեղութիւն պատճառեց և արտաքոյ կարգի տա-
քութիւնը, որ արեւի տակ Բովիւրի ջերմաչափով հասնումէր 43 աստի-
ճանի 11—3 ժամը Յուլիս և Օգոստոս ամիսներում, որ թէև անհա-
ւատալի է թիում, սակայն իրողութիւն է։ Զերմութիւնը այնքան սաս-
տիկ է եղել, որ նկատել են մոծակներ մանաւանդ քաղաքիս հարաւա-
րեմտեան կողմը եղած Արփաչայի ջրաւտ և կանաչուտ ելերքներում։

Մի քանի օրով պղատութիւն գտնել կամենալով այդ արտաքոյ կար-
գի շոքերից և հրամանաւ հանգչիլ կամենալով պաշտօնիս զբաղմունք-
ներից, ցանկացայ տեսնել Պարս քաղաքը, բայց նախ քան ուղեգրու-
թիւնս սկսելը մի քանի խօսք էլ տեղւոյս դպրոցների մասին խօսեմ՝
հարեանցի կերպով։

Բ.

Ալեքսանդրապօլիսի դպրոցը թե՛՛ւն Գրեգորի Թեալիսի

Յունիսի 1 ին սկսուելով տեղւոյս երկսեռ Գպրոցների քննութիւնը՝
վերջացաւ նոյն ամսոյ վերջերին. և ուսուցիչները դպրոցների վարչու-
թեանց հետ տարեկան ուսումնական մասին զեկուցումները պատրաս-
տելով՝ գնացին ամառանոց և Տփլիսի Հայ Ասուցչական ժողովը. ես
դպրոցների ոչ ուսումնական և ոչ տնտեսական մասին պէտք է խօսեմ.
այլ մի խնդրի մասին՝ որ յարուցուած է տեղւոյս Արձակային Գպրոցը
Թեմականի վերածելու համար։

Ալեքսանդրապօլիսի Արձակային դպրոցը թեմական դարձնելու համար
տեղւոյն հասարակութիւնը և դպրոցի հոգարարձութիւնը զեռ 1870 թուա-
կանների սկիզբներում հոգս է արել յատուկ կանոնագիր խմբագրելով
դպրոցի համար և առաջարկելով Ա. Ե. հատուկ Աթուղիկոսին ի հաստա-
տութիւն։ Այդ կանոնագրութեան մէջ դպրոցը միշտ թե՛՛ւն էր՝ յիշուած.
բայց Ա. Ե. հատուտի կողմից հաստատուածի մէջ վիճակայինի է փոխուած.
Այս այսպէս. բայց տեղւոյս հասարակութիւնը ու մի խումբ երիտասարդ-
ներ խիստ փափագ ունին Արձակային Գպրոցը վերածել Թեմականի,
և որովհետև ըստ օրինաց իւրաքանչիւր թեմ մի թեմական գպրանոց

պէտք է ունենայ, և Երևանի թեմի դպրոցը հենց Երևանումն է, Պատուելի երիտասարդները ցանկանում են որ թեմի անունը Երևանի դպրոցից վերցուի և յատկացնուի Ալեքսանդրապոլի դպրոցին մի քանի յարգելի պատճառներով, — Նախ՝ որ Ալեքսանդրապոլի Արիճակային դպրոցը աւելի ապահով դրութիւն ունի և երկրորդ՝ մինչդեռ Երևանում միջնակարգ արքունի դպրոցներ մի քանի հատ լինելով բաւականացնում են տեղւոյ Հայերի ձգտումը և թեմական դպրոցի բարձր գասարանները փակ են մնում, Ալեքսանդրապոլում այդպիսի միջնակարգ դպրոցներ չլինելով՝ ժողովուրդը իւր որդւոց հիմնաւոր կրթութիւն, ընդ նմին՝ և իւր ուսումնասանչ մանկաւոյն, արտօնութիւն տալուց զուրկ է մնում, բայց եթէ Ալեքսանդրապոլի դպրոցը թեմական դառնայ, կարող է ժողովրդեան այդ իզձը լցնել, Արթութիւն ստանալու հետ արտօնութիւն ստանալը կեանքի խնդիր է մանաւանդ սորանից յետոյ և ես կ'ցոնկայի ոչ միայն Երևանինն ու Ալեքսանդրապոլինը թեմական դառնային, այլև միւս հայաշատ քաղաքներինը ևս. բայց եթէ ջանքը լինելու է միայն արտօնութիւն ստանալու և փառասիրութիւն յագեցնելու համար, ըստ իս, խորհուրդ չունի, Պիցուք Երևանի դպրոցը թեմական է, զորանից ինչ օգուտ, երբ համապատասխան գասարանները չունի. այս զեռ բաւական չէ. դպրոցի վարչութիւնը գուցէ միայն ունենալու համար Պ. և Պ. գասարան է պահել, ուր անցեալ ուսումնական տարին Պ. ում երեք, իսկ Պ. ում չորս աշակերտ միայն կային, Մի դպրոցի համար, որի նիւթական միջոցները կոպէկներով են հաշուում, այդ տեսակ տնօրէնութիւն, եթէ ոչ յանցանք, գոնէ շուայութիւն պէտք է անուանել. լաւ չէր լինիլ Պ. և Պ. գասարանների վերայ զուր ծախսեր անելու տեղ՝ ստորին գասարանների զուգընթացներ աւելացնէին տարրական կրթութիւնը մանուկներին հայ մայրենի լեզուով մատակարարելու համար, որով նոքա կարող կը լինէին արքունի դպրոցներում մեծ յառաջագիմութիւն գործել, քան թէ երկու գասարանների միայն եօթըն աշակերտի համար երկու և աւելի ստորին գասարաններ իւրաքանչիւրը միջին թուով 40 աշակերտներով զրկել մայրենի լեզուի ուսումից. առ այս, այսքան Պատնալով Ալեքսանդրապոլի դպրոցին, կասեմ։ —

Ալեքսանդրապոլի վիճակի համար հարկաւոր է մի միջնակարգ դպրոց տեղւոյն բազմահայ գիւղօրէից և նոյն ինքն քաղաքի պէտքը լրացնելու համար, արժանաւոր ուսուցիչներ ընծայելով ծխական դպրոցներին և բանդէտ քահանայ՝ եկեղեցիներին, որոց սակաւութիւնը ոչ միայն զգալի է, այլ սովի չափ տաղնապալի, Բայց նախ քան այդ տեսակ դպրոցի համար մտածելը, պէտք է մտածել աշակերտ հասցնել հարկաւոր քանակութեամբ, որ Երևանի դպրոցի դէպքերը յերևան չը գան. պէտք է միտ դարձնել նախ և առաջ թաղական դպրոցների թիւը աւելացնել քաղաքումս, Արիճակային դպրոցի առաջին դաստանը հար-

կաւոր քանակութեամբ աշակերտ հասցնելու համար. որով վիճակա-
յին զպրոցը աղատուելով պատրաստականների զուգընթացներից, իւր
ուժը կը կենդրոնացնի միայն հիմնական դասարանների յառաջադի-
մութեան վերայ:

Թէ այսպէս և թէ այնպէս, որչափ Ալէքսանդրապոլցիք ցանկա-
նումեն իւրեանց զպրոցի վիճակը բարձրացնել՝ մինչև անգամ՝ Երևանի
զպրոցի արտօնութեան վերայ աչք ունենալով՝ եթէ ուրիշ կերպ չի
յաջողել, նոյնքան էլ Երևանցիք պէտք է աշխատէին իւրեանց
չնորհուած արտօնութեան համար հոգալ, պաշտպանել իրանց իրա-
ւունքը միևնոյն ժամանակ զպրոցի վիճակը բարելաւելով. բայց
ինչ ենք տեսնում, յարեւելից և յարեւմտից վեր են կենում Երևանի
զպրոցը պաշտպանելու. իսկ Երևանցիք գուցէ և իւրեանց նուիրուած
փաստաբանութիւնները չեն կարգում: Մինչդեռ Պ. Ղ. Աղայեանը
Շուշուց իսկ Պ. Յ. Գ. Ախալցխայից Երևանի զպրոցի ներկայ արտօ-
նութիւնը հարկաւոր համարելով պատճառաբանութիւններ են անում,
Երևանի զպրոցի ուսումնական հոգաբարձուք և գրագէտ տեսուչն ու
ուսուցիչները բոլորովին լուռ են մնում. այս լուութեան պատճառը
չեմ վստահանում այդ աստիճան անտարբերութիւնը համարել. երևի
մի յարգելի պատճառ կայ, Ինչևիցէ. ամիոփելով գրուածքս այդ մա-
սին՝ Երևանցւոց համար ցանկանում եմ արթնութիւն իւրեանց ա-
ռանձնաշնորհեալ արտօնութիւնը արդիւնաւոր կերպով պահպանելու,
իսկ Ալէքսանդրապոլոց համար ցանկանում եմ նախ՝ թաղական զպրոց-
ների շատութիւն և վիճակային զպրոցի հիմնական դասարանների
հիմնաւոր կրթութիւն և ապա թեմական զպրոց ունենալու ձգտում,
եթէ միայն արտօնութեան համար չէ: Գառնամ ուղեգրութեանս:

Գ.

Ի՞նչպէս պարզ գործը թուի Ղարս և սահմանփութի շէնտերը: Արքիմ. — Թիւ-
նիշեր: — Արք: Ղարսի շէնտեր: Գործարար:

Ինչպէս վերը ասացի, Ալէքսանդրապոլի շորերից և զբաղմունքներիցս
մի փոքր զիւր գտնելու համար՝ ցանկացայ Ղարս տեսնելու փափագս
իրագործել և Յուլիսի 15ին առաւօտեան ժամը 6ին կառք նստելով
երկու ուղեկիցների հետ բռնեցինք Ղարսայ ճանապարհը, որ մինչև
Ղարս և կարծեմ այնտեղից մինչև սահմանագլուխը խճուղի է:

Գեռ նոր նուաճուած երկիրը չմտած, դեռ Արփաչայը չ'անցած՝
մենք հետզհետէ անցանք. Ալէքսանդրապոլի հոչակաւոր բերդի կող-
քով, որ շինուած է Արփաչայի ձախ ասի վերայ, Գեաի ձորի մէջ բեր-
դից ներքև, ճանապարհին մօտ դեռ մնում են սահմանագլխին վերա-
բերեալ մի քանի հարկաւոր հաստատութեանց շինութեան մնացորդ-
ները քայքայուած դրութեամբ, նոյնպէս և գետի միւս ասիին տաճկաց

վերաբերեալներն հետքերը, բայց աւելի աւերակ, Մենք Արփաշայը անցանք մի քարաշէն կամրջով՝ որ վերջին Ռուս—Տաճկական պատերազմի ժամանակ է շինուած՝ ինչպէս և խճուղին։ Արփաշայը որով և կամուրջը կամ՝ հին սահմանագլուխը Ալէքսանդրապոլից հետի է Յ վերստի շափով, Պամուրջը անցնելով՝ մենք արդէն նոր նուաճուած երկրումն էինք, և ամեն պատահած դարուփոս խօսակցութեան առարկայ էր դառնում։ Ալէքսանդրապոլից դէպի Ղարս տանող ճանապարհի առաջին կայարանն է Արգինայ և մենք մինչև Արգինայ հասնելը, անցանք հայի և թուրքի թիքնիզ գիւղերի մօտից։

Այդ գիւղերը գտնվում են փոսորակի մէջ, որոնցից հարաւ բարձրացող մի բարձրաւանդակի վերայ կայ մի հին ամրոց, որ կոչվում է գիւղերի անուանով Թիքնիզ, Թէ գիւղերը և թէ ամրոցը ճանապարհից դուրս լինելով՝ ես պատեհ առիթ չը կարողացայ ունենալ տեսնելու։ Բայց, ինչպէս ինձ պատմեց գիտակ ուղեկից ընկերս, ճիշտ Ղափուլիի ամրոցի պէս է եղել, Իսկ Ղափուլիի ամրոցը, որ Ալէքսանդրապոլի գաւառումն է և հարաւային կողմն է գտնվում 2 ժամու հեռաւորութեամբ, կրաշաղախ խարտեաշ կոփածոյ քարերով մի շէնք է բարձր պարիսպներով և բրգաձև անկիւններով և շատ մեծ ծաւալ չունի։

Ժողովրդեան աւանդութեան նայելով, այդ ամրոցները (Ղալէք) շինուած են լեզզու ժամանակին, ուր պատսպարուել է Հայ Քրիստոնեայն բարբարոս լեզզիների հալածոնքից ազատուելու համար, Ես անցեալ տարի տեսայ Ղափուլիի ամրոցը (Ղալայ) շատ հետաքրքիր եղայ աւելի մանրամասն տեղեկութիւն ստանալ ժողովրդեան բերանացի աւանդութիւններից, բայց աւելի ոչ ինչ չ'կարողացայ լսել, գիր և արձանագրութիւն չ'կարողացայ նկատել պատերի վերայ, Առանց ժողովրդեան աւանդութեան դէմ՝ մեղանչել յաւակնելու, իբրև նեթազրութիւն կ'ասեմ՝ որ, այդ ամրոցները լեզզիների ժամանակից առաջ են շինուած, որովհետև լեզզիների ասպատակութիւնները տեղի էին ունենում անցեալ դարու մէջ, երբ Հայաստանը փոփոխակի Յունաց Արաբաց, Պարսից և վերջապէս Տաճկաց իշխանութեան տակ ընկնելով յոգիս ապաստան էր մնացել, ժողովուրդը յեալին թշուառութեան մէջ, իւր զիւրութիւնը միայն գաղթականութեան մէջ էր փնտոում, չեմ յիշում զեռ Ըաջ—Արասի մեծ գաղթականութիւնը և աւերածութիւնները Հայաստանի մէջ, Այդ ողորմելի դրութեամբ Հայերը բնակէին կարող միջոց ունենալ ամրոցներ կառուցանելու այնպէս, ինչպէս Ղափուլիին է, որպիսի շինութիւն կառուցանելու համար հարկաւոր է իշխանական սաստ և բաւական ոյժ, ժողովրդին աշխատացնելու համար։ Ըստ իս, այդ ամրոցները Բագրատունեաց հարստութեան օրով են շինուած և իշխանազն սեպուհների բնակարան պէտք է համանել, և պատսպարան, թող ներքին պատերազմներն ու վէճերը, Յունական աւերածութեանց և Արիասլանների կոտորածների առաջ։ Այդ

ամբոցները այժմեան ռազմագիտութեան առաջ նշանակութիւն չունին, և թնդանօթի մի քանի հարուած կարող են ճանապարհ բաց անել զէպի ամբոցի մէջը, բայց նեւս — նեղի (աղեղ) դարերում դոքս անառիկ կարող էին համարուել:

Հ. Ալիշան Աւփուլիի ամբոցի համար ոչ ինչ չէ գրում. այլ արեւելեան Շիրակայ գիւղերի կարգում միայն գիւղի անունը տալով անցնումէ. *) իսկ Թիքնիզի համար «յորում հին շինուած մի» ասելով, մէջ է բերում Հ. Ներսէս Սարգսեանի գրուածքը. որից երևումէ թէ. ամբոցը «բերդ մի հոյակապ» է. Հ. Սարգսեան նկարագրումէ տեղի զիրքը և բերդի գրութիւնը, յաւելացնելով՝ որ ինքը չէ կարողացել արձանագրութիւն ինչ ասնել, որ ժողովրդեան պատմութեան հետեւելով՝ այլ քարերի հետ պոկած և ուրիշ բանի գործ դրած է համարում. Հայր Ալիշան Սարգսեանի նկարագրութեամբ Թիքնիզի ամբոցի մասին խօսելուց յետոյ իւր կողմից աւելացնումէ. «Ի հարաւոյ արեւելից գեղջն (Տիգնիս) կայ բերդդ այդ, ի 1535 2. բարձու լեռնակի, և աւանդի մեհնատեղի լինել ի հնումըն **» Հ. Արարիկ Ա. Սրապեան ոչինչ չէ գրում այդ մասին. ***)

Թէպէտ Հ. Սարգսեան ասումէ որ Թիքնիզի ամբոցի արձանագիրը ըստ վկայելոյ ակնատեսից, ուրիշ քարերի հետ տարուել է ի պէտս այլ շինութեանց. սակայն ես կարծումեմ՝ որ բնաւ արձանագիր չէ եղել. որովհետեւ Աւփուլիներ չ'ունին:

Մեր նախնիք՝ որ սովոր էին ամեն մի մատուռը պատմութեան համար աննշան արձանագրերով զարդարել, որոնք յայտնումեն այս կամ այն մի նուէրք, զլացել են այդպիսի ամբոցների ճակատին մի մի արձանաքար կպցնել, երևի նորա համար, որ մատուռն ու եկեղեցին իրրև սրբատեղիք շինողի բարեպաշտութեան առհաւատչեայ համարուելով՝ նոցա յարգը բարձրացնելիս են եղել. այն ի նչ ամբոց շինողները այդ բազը չեն ունեցել, և դոցա շինութիւնը և ով գիտէ ինչ դասն յիշատակութիւններ կարող էին կապուած լինել այդ ամբոցների շինութեան ու նոցա շինողների անուան հետ: Արովհետեւ այդ ամբոցներից ու բերդերից շատը շինուած են իրրև ամբարդակ հարազատ ազգային բուն իշխանութեան գէմ ընդվզելու համար: Շատ համարելով այսքանը, դառնամ ուղեգրութեանս, յոյս ունենալով որ այժմ հետաքրքիր հնասոյց անձինք աւելի մանրամասնաբար ի մօտոյ զննելով Շիրակի բազմաթիւ հնութիւնները՝ հարուստ նիւթ կը մատակարարեն հետաքրքիր Հայ հասարակութեան:

Թիքնիզների մօտով անցնումէ Քարախանէ գետակը իւր գետակներով, որ միանումէ Արփաշայի Քաշ—Շօրագետի—հին Շիրակաւանի կամ Սրապուռօսի մօտ, որի մասին յետոյ:

*) Ներակ երես 167. **) Նպն երես 8. ***) Արարատ 1879 թ.

Հարթ ճանապարհը ու ամուր քարաշէն կամուրջները բարձրաբար-
բառ քարոզում են որ, քաղաքակիրթ և լուսաւորեալ տէրութեան
ձեռք է կատարել այդ ամենը իւր զօրութեան և իւր հպատակների բա-
քեկեցութեան համար. այդ ամենը Ռուսաց տիրապետութեան օրով են
շինուած:

Գ.

Արգինայ և իւր հնա-բնիւն:

Մեր հասանք Արգինայ, իջանք սուրհանդակատան սենեակներից մի-
նում. և մինչև հանգու հունգը, տեսանք եղած հնութիւններից ա-
մենանկատելին—Արգինայի հռչակաւոր եկեղեցու մնացորդը, Այդ
մնացորդն է եկեղեցու հիւսիսային և մասամբ արեւմտեան պատը.
Եղած մնացորդից կարելի է ննթագրել, որ եկեղեցին շինուած է եղել
յար և նման Երազդաւորսի եկեղեցուն, ինչպէս երևում է, առանց
սիւնի, որպիսի են Բագրատունեաց ժամանակի եկեղեցիների շատերը—
Մարմաշէն, Երազդաւորս և յն:

Արգինայի եկեղեցու մնացորդի—հիւսիսային պատի ներսի դճի որմ-
նակամարի վերայ կայ մի արձանագրութիւն, որի մի քանի բառերը
հազիւ կարողացանք կարգալ հեռագիտակով և կարգացածներս գրե-
լով թողի ուղեկցիս մօտ, որ զժբաղղաբար մինչև ուղեգրութեանս
կարգի գնելը՝ կորցրել էր այլ թղթերի հետ. Այդ մի քանի բառերն
էին, որքան յիշում ենք. «Քեռորդի Խաչկայ Հայոց Պաթուղիկոսի» և
մի քանի բառ, որ մոռացել եմ. Արգինայի նոյնպէս և Երազդաւորսի
եկեղեցիքը՝ նայելով իրանց մեծութեան՝ շատ ու շատ բարձր են:

Արեւմտեան Շիրակայ հնութիւնների մասին փոքր ի շատէ գրել են
հանգուցեալ Աբէլ և Սարգիս եպիսկոպոսները՝ մեծ մասամբ Անին ի
նկատի ունելով, նոյնպէս Շահխաթունեան հանգուցեալ Յովհաննէս
Եպիսկոպոսը. Արեւմտեան Շիրակի մասին աւելի ընդարձակ գրել է
Հ. Վիւրեղ Վարդապետ Սրապեան՝ որ ուղարկուել էր Աեհափառ Պա-
թուղիկոսից նոր նուաճուած երկրի հայաբնակ տեղերը փիճակագրելու,
որ Արգինայի մասին խօսում է առանձին հատուածի մէջ ընդ վերնագ-
րովս «Արգինայ գիւղաքաղաք»։ Հայր Վիւրեղ Արգինայի «մեծ Աթոռ»
և այնտեղ մեռնն եփած լինելուն բերում է հայերի և թուրքերի աւան-
դական խօսուածքը ի վկայութիւն. Եւ յիշում է Հայ պատմիչների
խօսքերը, որոնք ապացուցանում են Արգինայի ոչ միայն անցեալ փառ-
քը իւր փարթամութեամբ, Հայրապետական Աթոռը իւր մէջ հիւրն-
կալելու պատահութիւնը ունենալով, այլև մեծ ուսումնատեղի լինելը,
որի մէջ դաստիարակուածները պատանձացնելիս են եղել Յունաց ի-
մաստակ աստուածարաններին. Հ. Վիւրեղ ոչինչ չէ խօսում Արգինայի
եկեղեցու այժմեան մնացորդի համար. (տես Արարատ 1879 թ. երես

229—230 և 306—307. Յունիս, Յուլիս (ամսատետրակներ), Շիրակայ մասին գրել է նաև Քաջբերունին՝ փռլի մէջ, որ ունիմ ձեռքիս տակ որոնցից օգտուելու տրամագրութիւնս չեմ՝ ծածկում նկատողութիւններս հետաքրքիր դարձնելու համար:

Արգինայի եկեղեցու մասին Լ. Ալիշան «Չայժմեան վիճակ այսպիսւոյ քաջանշան տեղւոյ այսպէս ստորագրէ մերս Սարգիսեան» ասելով*), չափերտի մէջ առնումէ հետևելով.— «Աւանացեալ այդ Քաղրատունեօք Արգինայ և պայծառ եկեղեցեօք պերճացեալ առ մի ի հասարակ գիւղիցն է տաճկարնակ սակաւաթիւ տամլք ի մեծին դաշտավայրի, ժամաւ հետի ի Թիբնիզայ, բլրոց բարձանց կալով ի թիկանց նորա յարեւմտից, նախնի մատենագրացն յիշատակք զշինուածոց Արգինայի սակաւք են, Հայրապետանոցն և եկեղեցիք, զորս Խաչկայ Վաթուղիկոսի ասէ, շինեալ Ասողիկ գեղեղեցեացն բազում գովասանութեամբ խօսի, հրաշատեսիլս և չքնաղագեղս ասելով յօրինուածովք «Չերիցն ի դոցանէ շունիմ ինչ ասել, որոց կմախք հազիւ տեսնին «գերեսօք գետնոյ միումն և եթ կոփածոյ քարանցն իսպառ փոնցեալ իբրև մորթեղերծ եղելոյ՝ անյայտացեալ ձեռովն արձանացեալ կայ «Սակայն մեծն այն ի չորիցն՝ Վաթուղիկէն անուանեալ, զոր շինեալ ասէ նոյն մատենագիր վիմարդեան կոփածոյիք, հաստահեղոյս արձանօք, գմբեթարդ խորան երկնանման, հիւսիսային որմոյն և եթ հանդերձ կիսասեամբն արեւմտեան կողմանն կանգուն կացեալ, բաւական վինի զարթուցանել զհաճոյական ախորժակ հնասիրին՝ ընդ վսեմութեան ձեղյն, և անմահ կարգալ զձեռն ճարտարապետին իւրոյ Տրբգատայ, որ նախ հիմն արկ սմին, և յետ այնորիկ կաթուղիկէին Անոյ «Տարածութեամբ շատ փոքր է սա քան զնա, այլ հոյակապութեամբն ոչ այնպէս: Արձանագրերն՝ որ ի վերայ արեւմտեան զրանն՝ իսպառ խանգարեալ, թուական մի և եթ նշմարի ի նմա նկԱ (1012) **): «Այր և այլ տող մի արձանագիր յորմն անդ հիւսիսոյ ի ներքին կողմին, այլ առ տեղւոյն բարձրութիւն անվերձանեկի մնաց, Վաթուղիկոսունք երկու, Անանիա և Խաչիկ աստանօք թաղեցան, որոց ցանկալի էր արդեօք շիրմացն անարատ կալ ցայսօր, այլ ոչ գիտեմ, ո՞ր կատարած եհաս նոցա, Ի կողմն արեւմտից ի մէջ ձորոյն երեւին այլ ևս «քարակոյտք աւերակաց և առ ափամբ սեպացեալ բլրոցն՝ աւերակամրօցի: Իսկ Հայրապետանոցին՝ և ոչ հետք նշմարին »:

Լ. Ալիշանի հետազօտութիւնից երևումէ որ Արգինան նշանաւոր տեղ է եղել Ձ. դարում, բայց աւելի հոշակ է ստացել Փ. դարում, երբ Վաթուղիկոսական Աթոռ այդտեղ է փոխադրուել:

(*) Շիրակ երես 12 — 13.

(**) Խաչկայ կաթուղիկոսանայք, քառ Սահիփաննոսի Տարտեղւոյ է ի ն.Պ. Թուին, տես «Արարատ» 1879 թ. 229.

Լ. Սարգիս բաղդ է ունեցել բաց ի յիշեալ եկեղեցուց ուրիշ երեքի էլ կմախքը տեսնելու. մենք այդ բաղդն էլ չունեցանք, որովհետև կբմախքներն այլևս չկան, միայն կրաշաղախ մի քանի գետնատարած թումբեր. ցոյց են տալիս թէ, այնտեղ եկեղեցի կամ շինութիւն է եղել:

Լ. Սարգիս փափագ է յայտնում, որ Խաչիկ և Անանիա Վաթուղիկոսների գերեզմանները անարատ կենային: Տաճարն ու եկեղեցին անարատ չպահողը Վաթուղիկոսի գերեզմանին կը խնայէր, բայց գուցէ գերեզմանները հողակոյտերի տակն են, որոնք բաւական բարձրացած են մինչև դրան կէսը անհետացնելու: Մեր՝ եկեղեցին զննելու ժամանակ մի քանի հայ գիւղացիք ընդ հովանեաւ նստած խորհրդածում էին տխուր: չըզիտեմ եկեղեցու ողբալի դրութիւնն ունէին ի նկատի թէ, մի ուրիշ աւելի ողբալի պատճառ կար:

Արգինայի բնակիչքը տաճիկ են եղել, որոնք գաղթել են՝ Պուսայ իշխանութեան տակ չմնալու համար: մի քանի տուն են մնացել, որոնց գետնափոր խրճիթները նախանձելի դրութիւն չեն ներկայացնում: Տաճիկների գաղթելուց յետոյ Վառազարութիւնը մալականներով է բնակեցրել այդ գիւղը, որոնք, ինչպէս յետոյ առիթ ունեցայ հենց իրանցից ականջալուր լինելու, գոհ չեն իրանց նոր բնակավայրից: Գաւառական վարչութեան բոլոր գիւնատները Արգինայումն են, որ այդ բաղդին արժանացել է միայն ճանապարհի վերայ գտնուելով: Գաւառը կոչվումէ Շորագեալ:

Արգինան Ալեքսանդրապոլից 18 վերստ հեռի է և գտնվումէ ուղղակի գէպի արևմուտք, Ղարսայ չայի ձախ ամի վերայ, այնտեղ, ուր գետը երկար խորաձորից դուրս գալով ընկնումէ փոսորակ հովտի մէջ: Արգինան շինուած է հիւսիսային արևմուտքում գտնուած սարաւանդի դօշին, որի առաջին տարածվումէ գողաւոր փոսորակ, որ Լ. Սարգսեանի գրածին հակառակ շատ փոքրացնումէ դաշտի տարածութիւնը: Արևմտքից բարձրանումեն այն բլրակները, որոնց միջից Ղարսայ չայը ահագին խորխորատ կազմելով՝ անցնումէ, իւր երկու կողմը թողնելով բլրակների պարսպաձև սեպացած սպառուածքը: որոնք երկարելով գետի ուղղութեամբ՝ հեռզհեռէ լայնանում և կանաչադարձ թումբեր ձևացնելով հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմից հովանաւորումեն Արգինային և աւելի երկարելով դաշտի մէջ ընդ նմին և ցածանալով հաւասարումեն նորան, լեռնակուտակ այլերներից սկսելով գեղածիծաղ կոհակների պէս հաւասարուելով մակերևութին Արփաչայի ամին:

Ա. երազարձիս ևս առիթ ունեցայ խօսակցել գիւնատներում ծառայող մի քանի պարոնների հետ. որոնց խօսքին նայելով և ներկայ դրութիւնը աչքի առաջ ունենալով՝ Արգինան գաւառական վարչութեան տեղի լինելու ոչինչ յարմարութիւն չունի, նախ՝ որ մի քանի տնուոր թուրքերն ու մալականները չեն կարող հայթայթել պաշտօ-

նեաների և նոցա մտ եկող գանգատաւոր գիւղացիների կենսական պիտոյքը՝ երկրորդ՝ ծառայողները, որ բոլորն էլ քրիստոնեայ են, եկեղեցի և հոգևոր պաշտամունք չ'լինելու պատճառով՝ զուրկ են մնում հոգևոր մխիթարութիւնից. և իրանց այս կարիքին բաւականութիւն տալու համար գնում են Պ. ըզըլ—չախչախ հայարնակ գիւղը, որ մօտ 6 վերստ հեռի է. Այսերական տան համար յատկացեալ մաղթանքի և այլ եկեղեցական սօների օրերը ժամերգութիւն և Ս. Պատարագ տեսնելու համար:

(Երբ—չ—կէ)

Յ. Վ. ՄՈՎՍԻՍԵԱՆ.

Քաջ իմանալով՝ որ սիրելի են ընթերցողաց Ամսագրոյդ նորանոր տեղեկութիւնք, մանաւանդ Հայրենեաց վերաբերեալք, փութամ ահա և մի նոր Բեւեռաձև 9 տող արձանագրութեան օրինակ՝ յօգուածոյս հետ միասին հասուցանել Խմբագրութեանդ ի տպագրութիւն, որ գրանուած է նոր—Պայագիտ Գաւառի Զաղալու Հայարնակ գիւղի մօտ եղած քարափան վրայ՝ տիրացու Աղէքսանդր Մխիթարեանի տան մօտ. որոյ միջոցաւ և Արձանագիրս ստացայ, Թէ և ցարդ գտածս Բեւեռաձև Արձանագրութիւնքն թուով 11 (5ն յԱրմաւիր, մին ի Յոյակերտ, մին յԷլառ, մին յԱդամիան, մին յԱլիչալու, մին ի Մարմաշէն, և վերջինս ի Զաղալու) գեռ չեն բացատրուած իսկապէս և թարգմանված, որ լոյս և օգուտ տային անգային կամ ընդհանուր պատմութեանն. բայց ժամանակիս հնագիտաց տաժանակիր աշխատութեանցն նայելով և հնագիտութեան մէջ մրցմանցն՝ յուսալի է որ մի օր այս արձանագրութիւնքն պսակեն բազմաշխատ հնագիտաց ջանքն ու վաստակն և լոյս ու փայլ տան Հայաստանի պատմութեանն ու աշխարհագրութեանը:

ՈՒՄՐՈՎ Բ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.